

Հարց

Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել Հանձնաժողովի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ռադիոհաճախականություններ օգտագործող տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Պատասխան

Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների մասշտաբային տրամադրման գործընթացը սկսվել է Հանձնաժողովի ստեղծման պահից: Հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 19Ն որոշմամբ սահմանվել են ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության հայտի ընդունման, քննարկման, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (մերժման), գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրման ընթացակարգերը, ինչպես նաև թույլտվություն ստանալու նպատակով դիմելու, ինչպես նաև թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարները: Ընդ որում՝ սահմանված վճարները 30%-ով ցածր էին Հայաստանի Հանրապետությունում գործող վճարներից, իսկ ռադիոկապի շարժական ցանցերի համար՝ նույնիսկ 68%-ով: Գործարար միջավայրի զարգացմանը նպաստելու նկատառումից ելնելով՝ կատարվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգի պարզեցում՝ մասնավորապես.

կրճատվել է ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

պարզեցվել են վճարների հաշվարկման ձևերը,

նվազեցվել է արբանյակային կապի երկրային կայանի թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափը՝ համապատասխանաբար 94.4%-ով և 66.6%-ով: